ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 30 >> ապրիլի 2013թվականի N 53 -Ա

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ <<ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՂԱՎԱԶԱՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՎԱՐՏԻՆ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքապետարանի <<Համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծածկած լողավազանում ձմռան սեզոնին կատարվել են մեծ քանակի շինարարական վերանորոգման աշխատանքներ, կառուցվել է նաև նոր մանկական ավազան, որը անհրաժեշտ էր երեխաների լողի ուսուցման համար: Նոր ավազանի սարքավորումները (ֆիլտրներ, պոմպեր և այլն) տեղադրելու համար անհրաժեշտ է 1200,0 հազար (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ: Լողավազանի նորոգումից հետո անհրաժեշտ է նաև տրիբունաներում տեղադրել նստարաններ՝ մրցումների ժամանակ հանդիսատեսին նստելատեղեր ապահովելու համար, որի արժեքը կազմում է 400,0 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, ուստի ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Գյումրու քաղաքապետարանի <<Համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը Գյումրու համայնքի 2013 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման <<Սպորտային նպաստներ բյուջեից>> 4727 տնտեսագիտական դասակարգման հոդվածից տրամադրել 1600,0 հազար (մեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան_____

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան _____

Մ.Գաբոյան_____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ.Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ.Հունանյան _____

Ռ.Մխիթարյան _____

Ե.Պողոսյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ